# ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ.

# ՃԱՇՈՑ-ԳԻՐՔ.

Հնագոյն ընտիր ընտիր ձեռագիր Աստուածաշունչներէն և Ճաշոցներէն կարի զգուշութեամբ ուղղագրուած՝ Մայր Աթոռոյս տպարանէն լոյս տեսաւ այս Ճաշոց-գիրքը, որոյ նաև նոր տառից և յստակ տպագրութեան գեղեցկութեան՝ անշուշտ եմք թէ ամեն ոք կհաւանի և կը վկայէ։

Մեր Եկեղեցւոյ Պաշտօնէից դիւրութեան համար՝ Ճաշոցի մէջ իւրաքանչիւր աւուր տօնից և հանդիսից հրահանգաց շարերուն մէջ բաւական պարզ բացատրուած խրատներ և հրահանգներ յաւելցած են, ինչպէս Ճառերն ևս ձեռագիր Ճառընտրաց համաձայն սրբագրուած։

## Ջ. Ա Մ Բ Ռ.

Բազմերախտ և արժանայիշատակ Սիմէոն Կաթողիկոսի աշխատասիրած այս պատուական և հետաքրքրական գիրքը ի լոյս ընծայուեցաւ Մայր Աթոռոյս տպարանէն։

Բովանդակութիւնն է հակիրճ Եկեղ. պատմութիւն Հայոց, Էջմիածնի բազում անցից և աղետից նկարագիրը, Սսոյ, Աղթամարի և Գանձասարի՝ ինչպէս նաև Պոլսոյ մի քանի Պատրիարքաց ընթացից վերայ ժամանակակից նշանաւոր տեղեկութիւնք, Էջմիածնի կալուածներ և հրովարտակք և այլք յականէ յանուանէ, ոմանց Վանօրէից, Վիճակաց, և Կուսակրական տնօրէնութեանց վերայ ծանօթութիւնք, միանգամայն իւր գործառնութեանց պատմութիւնք։

Սոքա բոլորն տեղեկութեան և ուշադրութեան արժանի պարունակութիւնք լինելով, մանաւանդ Սսոյ և Էջմիածնի իրաւասութեան եղն. նկատմամբ ներքուստ և արտաքուստ լարուած մեքենայութիւնք ներկայ ժամանակիս հետ բաղդատելոյ համար, անհրաժեշտ էր այսպիսի մի ընտիր հնութիւնը հաղորդել Ազգիս։

Գինն է առանց ծախուց ճանապարհի մի ——ֆլ։